ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 2, 1959 Общественные науки

ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

Ա. Ս. ՂԱՐԻԲՅԱՆ

Լրացավ նշանավոր հայագետ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, դիտության վաստակավոր գործիչ, բանասիրական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Ա. Ս. Ղարիբյանի ծննդյան 60 և գիտական, մանկավարժական ու հասարակական գործունեության 35-ամյակը։

Պրոֆ. Ա. Ղարիբյանը, իր գործունեությունն սկսելով իբրև հանրակրթական դպրոցի շարքային ուսուցիչ՝ հասել է հանրաժանոթ գիտնականի բարձր աստիճանին։ Իսկ դրա համար վճռական դեր են կատարել Սովետական իշխանության ընձեռած լայն հնարավորությունները և սեփական եռանդուն, քրտնաջան աշխատանքի ու ընդունակությունների զուգակցումը։

Խիստ բեղմնավոր ու օգտակար է եղել այդ ուղին. ահա թե ինչո՞ւ գիտական ու մանկավարժական մեր հասարակայնությունը գոհունակությամբ մեծարում է իր շարքերում աճած գիտության մշակին՝ հանրագումարի բերելով ու գնահատելով նրա վաստակը, նշելով նրա հորելյանը։

Պրոֆ. Ա. Ղարիբյանի լայն գործունեությունը ամենաընդհանուր գծերով կարելի է բաժանել երեք ուղղությունների՝ ա) գիտա-հետազոտական, բ) գիտա-մանկավարժական, գ) գիտա-կազմակերպչական։

Բազմակողմանի է նրա հետազոտական աշխատանքի ոլորտը։ Այն ընդգրկում է հայ բարբառագիտությունը, լեզվի պատմությունը, ժամանակակից հայերենը, բառագիտությունը և այլն։ Այս բնագավառում հայագիտությունը հսկայական նվաճումներ ունի, որոնք ձեռք են բերված հայագիտության հին և նոր սերունդների նշանավոր ներկայացուցիչների մեծ աշխատանքով, որտեղ նշանակալից է նաև Ա. Ղարիբյանի դերը։

Հայոց լեզվի անցած ուղու հարուստ շրջանները, լեզվական վիթխարի նյութի ինքնատիպ ու հետաքրքրական դրսևորումները, ապշեցուցիչ

բազմազանություն ու ճոխություն ունեցող բարբառները գիտնականի մեջ մեծ սեր են առաջացրել, նրան մղել գիտական-ստեղծագործական աշխատանքի։

Մեծ է Ա. Ղարիբյանի վաստակը հայ բարբառների ուսումնասիրության գործում, որը բնորոշ է ինչպես բազմաթիվ բարբառների հայտնաբերմամբ ու գիտական նկարագրությամբ, նույնպես և տեսական շատ հարցերի մշակումով։ Բարբառների ու բարբառագիտական հարցերի ուսումնասիրությանը նվիրված են մոտ երկու տասնյակ աշխատություններ, որոնցից մի քանիսը ծավալուն գործեր են։ Իրենց գիտական արժեքով առանձնապես հիշատակության արժանի են՝ «Հայ բարբառների մի նոր ճյուղ» (1939), «Համառոտություն հայ բարբառագիտության» (1941), «Հայ բարբառագիտություն» (1953), «Հայերենի նորահայտ բարբառների մի նոր խումբ» (1958) և այլն։

Հետազոտելով ու կուտակելով բարբառային շատ հարուստ նյութ՝ Ա. Ղարիբյանը գիտականորեն ապացուցել է բարբառների մի քանի ինքնուրույն ճյուղերի գոյությունը («ս», «կա», «հա» և այլն), որոնք իրենց հերթին ընդգրկում են մի շարք առանձին բարբառներ։ Նա տվել է հայերենի բազմազան բարբառների կառուցվածքի համեմատական ուսումնասիրության հաջող օրինակ։ Այս բնագավառում նրա մշակած տեսական հարցերի առանցքը կազմում են բարբառների դասակարգման և բարբառային փաստերն ու իրողությունները հայոց լեզվի պատմության զանազան խնդիրների լուծման նպատակին ծառայեցնելու հարցերը։ Նա հայագիտության մեջ առաջին անգամ կատարել է հայ բարբառների հնչյունական դասակարգումը՝ ընդգրկելով ժամանակին գիտությանը հայտնի դարձած բոլոր բարբառները, ըստ որում դասակարգման այդ հիմունքը տալիս է բարբառային այնպիսի խմբավորումներ, որոնք մի խմբի մեջ ներառում են նաև ձևաբանական կառուցվածքով տարբեր, սակայն բաղաձայնական ընդհանրություն ունեցող բարբառներ։ Ուշագրավ է բարբառների ձևաբանական դասակարգման նրա կատարած լրացումը և այնուհետև վերանայումը ըստ դերբայական, մասնիկավոր և գրաբարատիպ խմբերի (այսպիսի վերանայումը որոշ տարբերությամբ ու միանգամայն անկախ կերպով կատարել է նաև պրոֆ. Է. Աղայանը)։

Ա. Ղարիբյանը հայոց լեզվի պատմության ուսումնասիրությանը նվիրել է երեք տասնյակից ավելի աշխատություններ, որտեղ շոշափված են բազմապիսի խնդիրներ։ Դրանք վերաբերում են հայ էթնիկական լեզվի ծագմանը, հայերենի շրջանաբաժանմանը, գրաբարի, միջին հայերենի, աշխարհաբարի կառուցվածքի բնութագրմանը, հայ ազգային լեզվի կազմավորմանը, ինչպես նաև հայ մեծ լուսավորիչ Խ. Աբովյանի և ռևոլյուցիոն-դեմոկրատ Մ. Նալբանդյանի լեզվաբանական հայացքներին ու լեզվաշինական գործունեությանը և այլն։ Հատկապես պետք է նշել հայերենի քերականական կառուցվածքի պատմական զարգացման ուսումնասիրության տեսակետից կարևոր նրա վերջին աշխատությունը՝ «Հայերենի հոլովման զարգացման ներքին երկու օրենքների մասին» (1955), որտեղ քննարկված են հայերենի հոլովական ձևույթների քերականական նշանակությունների զարգացման ու փոփոխության հարցերը, որոնք բնութագրվում են հայերենի զարգացման տարբեր շրջաններում հոլովման համակարգի քերականական էական հատկանիշները և ձեռք բերած ինքնատիպությունը։

Հետազոտելով ու քննելով հայոց լեզվի կառուցվածքի պատմական զարգացման հարցերը՝ Ա. Ղարիբյանը զուգահեռաբար անդրադարձել է նաև ընդ-

հանուր և պատմա-համեմատական լեզվաբանության խնդիրներին։ Պետք է նշել նրա աշխատանքը հայ-սլավոնական համեմատական հնչյունաբանության վերաբերյալ։

Պրոֆ. Ա. Ղարիբյանի գիտական հետաքրքրության առարկաներից է ժամանակակից հայերենի քերականությունը։ 1934 թ. հրատարակելով իր «Հայոց լեզվի քերականությունը» (որը բարեփոխությամբ մինչ այժմ վերահրատարակվել է 22 անգամ), նա հիմնովին հաղթահարեց ձևական քերականության սխալները. ձևաբանության մեջ իրավացի կերպով վերականգնվեցին սեռական և հայցական հոլովները, վերացվեց խոսքի մասերի խմբավորումների խճճվածությունը. ճշտվեցին բայի դերբայական և դիմավոր ձևերի փոխհարաբերությունների հարցերը և այլն։ Հետագայում (1945) նրա կողմից հայագիտության մեջ առաջին անգամ մշակվեց տրոհվող լրացումների տեսությունը և այլն։

Այս գիտնականի սիրած բնագավառներից է բառարանագրությունը։ Նա առանձին կամ հեղինակակցությամբ կազմել և խմբագրել է բազմաթիվ բառարաններ՝ հատկապես թարգմանական, բացատրական և ուղղագրական բնույթի։ Բավական է հիշել հայ-ռուսերեն և ռուս-հայերեն ամփոփ բառարանների (1947—48) կազմումն ու խմբագրումը, ռուս-հայերեն քառահատոր մեծ բառարանի վերջին երկու հատորների և տպագրության պատրաստվող՝ ժամանակակից հայերենի բացատրական բառարանի խմբագրումը և այլն։

Ա. Ղարիբյանը մայրենի լեզվի դպրոցական շատ դասագրքերի հեղինակ է, որոնցով մի շարք սերունդներ մայրենի լեզու են սովորել։ Արժեքավոր են նրա մեթոդական ձեռնարկները, որտեղ համարձակ կերպով առաջ են քաշված ու լուծված լեզվի քերականական կառուցվածքի, գրավոր ու բանավոր խոսքի ուսուցման մեթոդիկայի բազմաթիվ կարևոր հարցեր. դրանք խիստ օգտակար են մեր մասսայական դպրոցի ուսուցչությանը մեթոդապես օգնելու գործում։

Պրոֆ. Ա. Ղարիբյանը երկար տարիներ դասախոսական եռանդուն աշխատանք է տարել Երևանի, ինչպես նաև Լենինականի, Թբիլիսիի, Բաքվի, Ստեփանակերտի բարձրագույն ուսումնական հաստատություններում։ Նա մի քանի տարի ղեկավարել է Երևանի համալսարանի ռուսաց լեզվի ամբիոնը, իսկ 1934 թ. մինչև այժմ ղեկավարում է Ա. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի ամբիոնը։ Մեծ գովասանքի է արժանի նրա դերը մասսայական դպրոցի ուսուցիչների և գիտական կադրերի պատրաստման գործում։

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Լեզվի ինստիտուտի հիմնադրման օրվանից (1944) մինչև 1950 թ. և 1956 թ. մինչև այժմ պրոֆ. Ա. Ղարիբյանը նրա դիրեկտորն է։ Նա ինստիտուտում ծավալել է մեծ աշխատանք, որի նպատակն է ստեղծել հայ նոր գրականության բոլոր հիմնական երկերի լիակատար քարտարան, կազմել ժամանակակից հայերենի միջին և ակադեմիական մեծ բառարաններ, հայ-ռուսերեն բառարան, մշակել ժամանակակից հայերենի գիտական քերականության, հայոց լեզվի պատմության հարցերը, ստեղծել հայ բարբառների ատլաս և այլն։ Այս կարևոր խնդիրների իրագործման մեջ մեծ է պրոֆ. Ա. Ղարիբյանի դերը թե՛ կազմակերպչական և թե հետազոտական աշխատանքի տեսակետից։

* * *

1959 թ. հունվարի 27-ին տեղի ունեցավ մեծարման երեկո, որը կազմակերպել էին Հայկական ՍՍՌ ԳԱ Նախագահությունը և հասարակական դիտությունների բաժանմունքը։ Երեկոն ներածական խոսքով բացեց Հայկական ՍՍՌ ԳԱ վիցե-պրեզիդենտ, ակադ. Մ. Ներսիսյանը։ Պրոֆ. Ա. Ղարիբյանի կյանքի, գիտական ու մանկավարժական գործունեության մասին հանգամանալից զեկուցում կարդաց Հայկական ՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ Լ. Մելիքսեթ-բեկը, որը հոբելյարին բնորոշեց իբրև խոշոր գիտնականի ու մանկավարժի։ Ողջույնի խոսքերով հանդես եկան հասարակական կազմակերպությունների ու հաստատությունների շատ ներկայացուցիչներ, ընթերցվեցին բազմաթիվ հեռագրեր, որոնք ստացվել էին ինչպես Հայաստանի, նույնպես և Միության տարբեր քաղաքներից՝ Մոսկվայից, Լենինգրադից, Տաշքենդից, Մինսկից, Կիևից, Թբիլիսիից, Բաքվից, Ստեփանակերտից և այլն։

Վերջում շնորհակալական խոսքով ներկաներին դիմեց պրոֆ. Ա. Ղարիբյանը։